

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2024-2025 ուս. տարվա
գիտական խորհրդի առցանց հարցման նիստի

ք.Երևան

21 փետրվարի 2025թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 15-ը:

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի 2018-2021 ուս. տարվա հայցորդ Նաիրա Կամոյի Շաբոյանի «Դրախտածառը (Cotinus coggygria Scop.) բուսական ծագման կենսաբանորեն ակտիվ ֆենոլային միացությունների ստացման հեռանկարային սկզբնաղբյուր» թեմայով ատենախոսական աշխատանքի քննարկում և գիտական խորհրդի եզրակացության հաստատում:
2. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

3. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի 2018-2021 ուս. տարվա հայցորդ Նաիրա Կամոյի Շաբոյանի «Դրախտածառը (Cotinus coggygria Scop.) բուսական ծագման կենսաբանորեն ակտիվ ֆենոլային միացությունների ստացման հեռանկարային սկզբնաղբյուր» թեմայով ատենախոսական աշխատանքի քննարկում և գիտական խորհրդի եզրակացության հաստատում:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի 2018-2021 ուս. տարվա հայցորդ Նաիրա Կամոյի Շաբոյանին, ով մանրամասն ներկայացրեց ատենախոսության շրջանականերում կատարված աշխատանքները, ստացված արդյունքները և պատասխանեց ներկաների հարցերին:

Ելույթ ունեցավ՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտքարտուղար Ա. Դադայանը, ով հաղորդեց, որ ատենախոսության վերաբերյալ կարծիք կազմելու համար այն տրվել է Ֆարմացիայի ինստիտուտի դոցենտներ Ա. Ծատուրյանին և Վ. Կիրակոսյանին: Ա. Դադայանը ձայնը տվեց նրանց, ատենախոսության վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների ներկայացման համար:

Վ. Կիրակոսյանը և Ա. Ծատուրյանը նշեցին, որ կատարվել է մեծ ծավալի աշխատանք: Վերջին տասնամյակում դեղերի ընդհանուր անվանացանկում զգալիորեն աճել է բուսական պատրաստուկների տեսակարար կշիռը, որը բավականին լուրջ նախադրյալներ է ստեղծում այս ոլորտում բուսահումքերի ստանդարտավորման մեթոդների և ֆիտոնիրինգի գործընթացի կատարելագործման համար: Այս առումով հեռանկարային և արդիական է դեղաբուսական հումքերի և բուսական պատրաստուկների ստանդարտավորման ժամանակակից, արդյունավետ, ոչ աշխատատար և տնտեսապես մատչելի մեթոդների մշակումը և կատարելագործումը: Հաշվի առնելով այս հանգամանքը Ն.Կ. Շաբոյանի ատենախոսական աշխատանքը բավականին հետաքրքիր է և արդիական:

Ֆիտոքիմիական ուսումնասիրության շրջանակներում՝ մթերված հումքերում հետազոտվել է կենսաբանորեն ակտիվ նյութերի (եթերային յուղեր, ֆենոլային, պոլիֆենոլային նյութեր, ֆլավանոիդներ, ամինաթթուներ) որակաքանակական կազմը և դիտարկել բնակլիմայական պայմանների, ինչպես նաև բույսի օնոտգենետիկ (մինչ ծաղկում, ծաղկում, պտղակալում) առանձնահատկությունների ներգործությունը կենսաակտիվ նյութերի կուտակման դինամիկայի վրա: Կենսաբանորեն ակտիվ նյութերի որակաքանակական կազմը որոշվել է ժամանակակից եղանակների կիրառումամբ (բարձր արդյունավետության հեղուկային քրոմատոգրաֆիա, գազային քրոմատոգրաֆիա համակցված մաս սպեկտրաչափով, ատոմային և

էլեկտրոնային սպեկտրասկոպիա): Նշված մեթոդներով ստացված արդյունքները կասկած չեն հարուցում, իսկ կատարված աշխատանքը ծավալուն է: Դրա հետ մեկտեղ ատենախոսության վերաբերյալ կան որոշ դիտողություններ, որոնց շտկումը կբարելավեր աշխատանքի ընդհանուր որակը:

- Էջ 36-ում լյուտեոլինի որոշման շարժական ֆազի պատրաստումը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝ մեթանոլ: 0,1 %-ոց TFA-ջրային լուծույթ 30:70 հարաբերությամբ, իսկ իզոկրատական ռեժիմը փոխարինել իզոկրատիկ ռեժիմով:
- Էջ 35-ում դաբադաթովի, ռուտինի, կվերցետինի որոշման շարժական ֆազի պատրաստումը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝ մեթանոլ:ջուր: քացախաթթու 50:45:5 հարաբերությամբ:
- Էջ 32-ում ներկայացված գազային քրոմատագրող մասս-սպեկտրաչափական մեթոդ ձևակերպումը առաջարկում են ներկայացնել, որպես գազային քրոմատոգրաֆիա համակցված մասս-սպեկտրաչափական եղանակով:
- Դաբադաթովի, լյուտեոլինի, ռուտինի կվերցետինի նույնականացման համար անհրաժեշտ է ներկայացնել վերոնշյալ ստանդարտների քրոմատագրերը:
- Դիլիջանից, Երևանից, Կապանից հավաքված հումքերում, ինչպես նաև դրախտածառի երիտասարդ ցողուններում, տանինի իդենտիֆիկացումը ԲԱՀՔ եղանակով իրականացվել է 2,476; 2,456; 2,628; 5,232 րոպեններում համապատասխանաբար: Անհասկանալի է, եթե օգտագործվել է նույն քրոմատոգրաֆիական պայմանները, ապա ինչու է դրախտածառի երիտասարդ ցողուններում նկատվում տանինի լարվածակետի զսպման ժամանակի (Rt) անհամապատասխանություն:
- Տարբեր գոտիականություններից մթերված հումքերի ամինաթթվային կազմի որոշման համար անհրաժեշտ է այդ բաժնում ներառել ամինաթթուների ստանդարտ խառնուրդի ներկայացուչական քրոմատագիրը:
- Ֆենոլաթթուների, ֆլավանոիդների, ինչպես նաև հակաօքսիդանտային ակտիվության որոշումը իրականացվել է սպեկտրալուսաչափական եղանակով, սակայն աշխատանքում բացակայում են վերոնշյալ նյութերի կլանման սպեկտրերը:

Որոշեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց հաստատել Նաիրա Շաբոյանի ատենախոսության վերաբերյալ եզրակացությունը՝ վերը նշված դիտողությունները շտկելու պայմանով:

2. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
ք.գ.թ. դոցենտ

Ա. Մկրտչյան

Գիտական խորհրդի քարտուղար՝
ք.գ.թ., դոցենտ

Ա. Դադայան